

# ՏԱՐՕՐԻՆԱԿ ԲԱՂԱՔԻ ԱՆՕՐԻՆԱԿ ՎԱՐՊԵՏԸ

*Posted on March 10, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



## Բոգդանը՝ Ջունգլիներից

### Սամվել Խալաթյան, Երեւան

Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաք Վանաձորում հաճախ կարելի է հանդիպել օտարազգի զբոսաշրջիկների, որոնք տեղացիներից հետաքրքրվում են՝ ինչպե՞ս գնալ վարպետ Բոգդանի արվեստանոցը: Հյուրընկալ վանաձորցիներն անմիջապես պատասխանում են.

-Վարպետի արվեստանոցը Ջունգլիներում է:

-Oh my god!...



Միևջդեռ, զարմանալու բան չկա, հանրահայտ խաչքարագործ վարպետ Բոգդան Հովհաննիսյանի արվեստանոցը, իսկապես, Ջունգլիներում է:

Բանն այն է, որ Վանաձորն ամենատարօրինակ քաղաքն է աշխարհում: Այստեղ կան ոչ միայն Ջունգլիներ, այլև՝ Կոնգո և Բանգլադեշ անվամբ թաղամասեր: 1970-ականների սկզբին, երբ Կիրովականը (այժմյան Վանաձորը) մեծ թափով կառուցապատվում էր, այդ երկրներում ժողովրդական ապստամբություններ բռնկվեցին և, կիրովականցիները, ժողովրդավարությանն ու անկախությանն իրենց վերաբերմունքն արտահայտելով՝ նորակառույց թաղամասերը կոչեցին այդ երկրների անուններով: Իսկ քաղաքի

արևելյան այս թաղամասը Ջունգլիներ անվանեցին, որովհետև այն անբարեկարգ էր և մարդիկ տուն հասնելու համար բազմաթիվ արգելապատնեշներ պիտի հաղթահարեին...

Ջունգլիներում վարպետ Բոգդանին գտնելը հեշտ է. ձեզ խորհուրդ կտան գնալ այն ուղղությամբ, որտեղից ժողովրդական կամ ազգագրական երգ է հնչում: Անվարան գնացեք: Հինգհարկանի բնակելի շենքերից մեկի առաջին հարկից կտարածվի արտոթալուր երգը.

*-Գուլթնի թախում նըմո՛ւշ-նըմո՛ւշ,  
Չկեր վաստակ քյանց էն անուշ,  
Աշխարհի շեն վըր գուլթնին է,  
Գուլթան չըլներ աշխարհն ինչ էր*

Բաց դռնից կերևա 70-ը բոլորած, խաչքար պատրաստող Վարպետը, որին

Հրջապատած տասնյակից ավելի  
երեխաներ կավից արձանիկներ  
պատրաստելով են զբաղված:



Մենք արդեն Ջոնգլիների մշակութային կենտրոնում ենք:

### **Բոգդանիկների աշխարհում**

Տոհմիկ քարագործ վարպետ Գևորգն իր կրտսեր որդուն անվանեց Բոգդան՝ երկու անգամ երագում այդ առաջարկը ստանալուց հետո: Բառացի թարգմանությունը՝ Աստծո տված, Աստվածատուր:

Բոգդանը երագում էր գեղանկարիչ դառնալ, բայց հանգամանքների բերումով նրան չհաջողվեց իր քարագործ ապուլապատերի արհեստից հեռանալ, ավարտեց Երևանի

Թերեմեցյանի անվան գեղարվեստի ուսումնարանի քանդակի բաժինը: Մասնուց սիրում էր երգել և ուսումնառության տարիներին անդամագրվեց Երևանի պետական համալսարանի երգչախմբին, որի ղեկավարը Հովհաննես Զեքիջյանն էր:

Վերադառնալով ծննդավայր, գեղանկարչություն դասավանդեց դպրոցում, իսկ 1988-91 թվականներին Հայաստանի գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի տնօրենն էր: Առանց երգելու չէր կարող, աշխատանքի անցավ նաև տեղի «Հորովել» ազգագրական երգի-պարի համույթում, ազատ օրերին ազգագրական, աշուղական երգերի բանահավաքչությամբ զբաղվեց, շուրջ՝ 3700 երգ:

Լոռին ազգագրական երգերով աչքի չի ընկնում, շատերի կարծիքով այս բնաշխարհի ժողովուրդը երգեր չի հորինել, կամ դրանք չեն պահպանվել, բացառությամբ՝ Գյուլագարակ գյուղում Կոմիտաս Վարդապետի գրի առած և մշակած հանրահայտ «Հորովելի»: Բոգդանը չհավատաց Լոռու երգարվեստի «ամլությանը», գյուղից-գյուղ շրջելով երգեր ու պատառիկներ գրի առավ, ձայնագրեց, ինքը սկսեց դրանք կատարել՝ հարուցելով մասնագետների զարմանքը:



1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո Վանաձորում թշվառագույն վիճակ էր: Դպրոցները գործում էին վրաններում, երեխաները մեծ մասամբ սնվում և հագնվում էին տարբեր երկրներից ստացված մարդասիրական օգնություններով: Երբեմնի արդյունաբերական, մշակութային աշխույժ կյանքով ապրող քաղաքում աղքատություն էր, ցուրտ, մութ... «Երեխաներին հոգեբանական սատարում է անհրաժեշտ», - վճռեց Բոգդանը և կարճ ժամանակամիջոցում կազմավորեց «Խորոտիկ» ազգագրական երգի մանկական համույթը: Երեխաներին երգեցողության բերող ծնողները, պարապմունքների ժամանակ, երբեմն, ձայնակցում էին: Բոգդան Հովհաննիսյանն ավելի ոգևորվեց և նրանց մասնակցությամբ ստեղծեց «Տաշիրը» համույթը: Ժամանակ անց, ազգագրական երգչախմբեր ստեղծեց և ղեկավարեց նաև բժշկական ուսումնարանում, մանկավարժական պետական ինստիտուտում: Այդ համույթները հանրահայտ դարձան հանդես գալով հանրապետական փառատոներում և

**մրցանակների արժանանալով:**

Վանաձորում ազգագրական երգերի համույթներում երգող փոքրիկներին Բոգդանիկներ էին կոչում: Հիմա նրանք հասակ են առել, երեխաներ ունեն, թոռնիկներ: Սակայն, Վանաձորում «Բոգդանիկները» չվերացան... Բայց այդ մասին` քիչ հետո:



**րկխոսություն քարի հետ**

Շուրջ 20 տարի է, որ ՀՀ նկարիչների միության անդամ, ազգագրական երգերի, գեղանկարչության և քանդակի բազմաթիվ փառատոների ու մրցույթների դափնեկիր Բոգդան Հովհաննիսյանը, բացի գրաֆիկական, գեղանկարչական և քանդակի

ստեղծագործություններից, խաչքարեր է կերտում: Նրա հեղինակած բազմաթիվ կոթողները տեղադրված են ոչ միայն Հայաստանում, այլև՝ Ռուսաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում: Օրերս, Վարպետը երկու լուր ստացավ՝ ԱՄՆ-ի [Մասաչուսեթս նահանգի](#) ազգային թանգարանը հիմնական ցուցադրության է վերցրել նրա խաչքարերից մեկը, իսկ մյուս հաղորդագրությամբ նրան հրավիրում են Արաբական Միացյալ Էմիրություններ՝ տեղում խաչքար քանդակելու և հայ խաչքարագործությանը ծանոթացնելու նպատակով:



Բազմաթիվ ցուցահանդեսներում, միջազգային բաց ներկայացուցչական միջոցառումներում (plener) Հովհաննիսյանի մասնակցությունն աննկատ չի անցնում՝ խաչքարի ավանդական կառուցվածքում ինքնօրինակ զարգացումներ ստեղծելու և իմաստաբանական խորհուրդներ պարունակելու գեղագիտությամբ:

Խաչքարագործ վարպետն առաջինն էր, որ կոթողներ ստեղծեց տարբեր գույնի քարերի համադրությամբ, արտահայտելով ոչ միայն գուներանգային գեղագիտություն, այլև չարի և բարու, խավարի և լույսի, մեղքի և ապաշխարման խորհուրդներ:

Խաչքարի խորությունների բազմազանության մեջ ներմուծելով նուրբ և համանվագային

տարրեր, ուղղակի կառուցվածքի խորքում թեքադիր կառուցվածքներ, դրանք փոխկապակցելով ազգային զարդարվեստի նախշերով ու առասպելական, հրեղեն թևավորների սիգանքով, Վարպետը սլացքի ավյուն և կոթողայնություն է ներարկում խորաքանդակին:



Անհնար է Բոգդան Հովհաննիսյանի կերտած խաչքարը չճանաչել այլ հեղինակների գործերի շարքում: Դրանք առանձնանում են զարդերի անթերի հղկվածությամբ, հաված կամ ազուցված շերտերի նազելի քմայքով, ոգեղեն լիցք հաղորդելու կախարդանքով, Հովհաննիսյանական ճաշակի բարձրարվեստ ներկայացմամբ:

Վարպետն օրն ի բուն իր արվեստանոցում է, որտեղ, դարձյալ, անպակաս է թաղի երեխաների ելումուտը: Տարիներ առաջ Բոգդան պապիկը նրանց կավ տալով առաջարկեց քանդակել: «Ի՞նչ քանդակենք», - հարցրին երեխաները: «Ինձ քանդակեք», - ասած Վարպետն ու այդ օրից տասնայակ «Բոգդանիկներ» են ստեղծվում, որոնք անչափ դուր են գալիս վարպետին այցի եկող զբոսաշրջիկներին և իրենց հետ վերցնում են որպես նվեր: Ի դեպ, միայն երեխաները չէ, որ աշակերտում են Վարպետին: Ցանկացած ոք, ով ցանկություն է ունենում քանդակելու, Բոգդան Հովհաննիսյանը սիրով օգնության է հասնում տրամադրելով նաև հարկավոր նյութն ու գործիքները:

Օրն ի բուն ստեղծագործում է Վարպետը՝ երզը շրթին, երբեմն՝ զրուցելով քարի հետ: Դա բոլորը գիտեն և զարմանալի չէ, որ ոմանք նրան հյուրընկալվում են ոչ միայն խաչքարի ծնունդը տեսնելու, այլև, այդ երգերն ու խոհերը լսելու համար:



Թերևս քարի հետ խոսելու, նրա հետ երգելու մեջ է Բոգդան Հովհաննիսյանի տաղանդաշատության ակունքը:



**Տեսաերիզը դիտել սեղմելով նկարը կամ ներքեվի գրությունը**

**[«Հրեշտակն ուսին» տեսաֆիլմը՝ Բոգդան Հովհաննիսյանի մասին \(24 րոպե\)](#)**



[ԱՐՏԱԳԻՆ ԿՈՉ ԵՒ ԱՏՈՐԱԳՐԱՀԱԿԻԱՔ ՓՐԿԵՆՔ ՀԱՅԵՐԵՆԸ](#)

**There are no comments yet.**